ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Սեպտեմբերի 26-ին, Վրաստանի խորհրդարանն իր արտահերթ նիստում՝ 117 կողմ եւ 2 դեմ ձայներով ընդունեց երկրի Սահմանադրության փոփոխությունները: Վրաստանի խորհրդարանի երկու ընդդիմադիր կուսակցությունները՝ «Միասնական ազգային շարժումը» ու «Եվրոպական Վրաստանը» քվեարկությանը չմասնակցեցին:

Սահմանադրության նոր նախագծում հիմնական փոփոխություններն առնչվում են նախագահի եւ խորհրդարանի ընտրություններին: Մասնավորապես, 2024 թվականից նախագահը համընդհանուր ընտրություններում անմիջական ուղղակի ընտրությամբ չի ընտրվի, նրան կընտրի ընտրական կոլեգիան: 2024 թվականից վերացվում է նաեւ մեծամասնական ընտրական համակարգը եւ խորհրդարանի 150 պատգամավորները կընտրվեն միայն համամասնական ընտրակարգով:

Ստորեւ ներկայացնում ենք Վրաստանի նոր Սահմանադրության հիմնական դրույթները:

ՆԱԽԱԳԱՀ

* Նախագահը կրկին մնում է պետության ղեկավարը, զինված ուժերի գլխավոր հրամանատարը եւ արտաքին հարաբերություններում ներկայացուցիչը: Սակայն նա արդեն պարտավոր չէ «սահմանադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրականացնել պետական մարմինների գործառույթները»:

* Նախագահը զրկվում է «Կառավարության նիստում հարցի քննարկումը պահանջելու եւ դրա քննարկմանը մասնակցելու իրավունքից:

* Նախագահն արդեն չի ընտրվի անմիջական ուղղակի ընտրությամբ, եւ նրան կընտրի 300 պատգամավորից կազմված ընտրական կոլեգիան, որի կազմում կլինեն պատգամավորները, տեղական եւ տածաշրջանային իշխանությունների ներկայացուցիչները: Սակայն 2018 թվականի նախագահական ընտրությունները կրկին կանցկացվեն անմիջական ընտրակարգով:

* Վրաստանի նախագահի պաշտոնում կարող է ընտրվել 40 եւ ավելի տարեկան (ներկայիս՝ 35-ի փոխարեն) Վրաստանի քաղաքացին, ով Վրաստանում ապրել է առնվազն 15 տարի: Սակայն հիմա թեկնածուից չի պահանջվի, որպեսզի այն ունենա մինչեւ ընտրությունները վերջին երեք տարվա ընթացքում երկրում ապրելու հաստատում:

* Ազգային անվտանգության խորհուրդը, որը ստեղծվում է «Ռազմական վերածննդի եւ երկրի պաշտպանության կազմակերպման նպատակով», որը սահմանադրության նախորդ խմբագրությամբ գլխավորում է Վրաստանի նախագահը, կդադարեցնի գոյությունը: Դրա փոխարեն, նոր սահմանադրությամբ կձեւավորվի պաշտպանության ազգային խորհուրդ, որը ռազմական ժամանակամիջոցում կիրականացնի սահմանադրական մարմինների ընդհանուր համակարգումը: Պաշտպանության ազգային խորհրդի մշտական անդամներն են՝ Վրաստանի նախագահը, վարչապետը, խորհրդարանի նախագահը եւ երկրի զինված ուժերի ղեկավարը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

2020 թվականի ընտրություններ

* Խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն խառն ընտրահամակարգով, ըստ որի, 73 պատգամավորները կընտրվեն մեծամասնական ընտրակարգով, իսկ մնացած 77 մանդատները կբաշխվեն համամասնական կարգով կուսակցությունների միջեւ, որոնք կհաղթահարեն ընտրական արգելագիծը:

* Ընտրական արգելագիծը, ներկայումս գործող 5 տոկոսի փոխարեն, կնվազեցվի մինչեւ 3 տոկոս, եւ կուսակցությունները կկարողանան ստեղծել ընտրական դաշինքներ (ինչը կորոշվի սահմանադրական հաջորդ փոփոխություններով):

2024 թվականից հետո

* Խորհրդարանը լրիվությամբ կանցնի համամասնական ընտրակարգի:

* Ընտրական դաշինքների ձեւավորումը կարգելվի: Ընտրական արգելագծի 5 տոկոսը կպահպանվի:

* Ընտրական արգելագիծը չհաղթահարած կուսակցությունների ձայները լրիվությամբ կփոխանցվեն հաղթանակող կուսակցությանը (սույն փոփոխությունը կվերացվի հետեւյալ փոփոխությամբ, եւ չբաշխված մանդատները կբաշխվեն համամասնականորեն:

* Քաղաքական մի կուսակցության կողմից առաջադրված պատգամավորները իրավասու կլինեն ստեղծել միայն խորհրդարանական մի խմբակցություն:

* Պատգամավորության թեկնածուների տարիքային ցենզը 21-ից կհասցվի 25 տարեկանի:

ՎԱՐՉԱՊԵՏ/ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

* Վարչապետը սահմանում է կառավարության գործունեությունը եւ նշանակում ու պաշտոններից ազատում նախարարներին:

* Վարչապետը կառավարության գործունեության համար հաշվետու է խորհրդարանի առաջ: Տարին մեկ անգամ նա կառավարական ծրագրի կատարման ընթացքի մասին զեկուցումով հանդես է գալու խորհրդարանում:

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

* Անցումային դրության 78 հոդվածի համաձայն, սահմանադրական մարմիններն իրենց իրավասությունների շրջանակներում պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցներն ապահովելու Եվրոպական միությանը (ԵՄ) եւ Հյուսիսատլանտյան համագործակցության կազմակերպությանը (ՆԱՏՕ) Վրաստանի ինտեգրումը:

* Քութայիսին չի սահմանվում որպես Վրաստանի խորհրդարանի տեղակայման վայր:

* Ամուսնությունը կսահմանվի որպես ընտանիք կազմելու նպատակով տղամարդու եւ կնոջ միջեւ միություն:

* Դատախազությունն արդեն չի ենթարկվի արդարադատության նախարարությանը, այն կդառնա անկախ մարմին եւ կլինի հաշվետու խորհրդարանի առջեւ: Այդ մարմինը կգլխավորի գլխավոր դատախազը, որին վեցամյա ժամկետով կընտրի խորհրդարանը:

* Ժողովրդական պաշտպանը կընտրվի վեցամյա ժամկետով: Նույն անձին կարգելվի երկրորդ ժամկետով օմբուդսմենի պաշտոնում ընտրելը:

ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆ. «ՀԱՅԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՄԻՇՏ ԷԼ ԻՐԵՆՑ ՀԻԱՆԱԼԻ ԵՆ ԶԳՈՒՄ, ԵՍ՝ ԵՎՍ, ՈՒ... ՀԱՂԹԵՑԻ»

ՀԱՅԱՍՏԱՆՅԻ ՇԱԽՄԱՏԻՍՏԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԱԿԻՐ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Թբիլիսիում սեպտեմբերի 2-27-ին անցկացվում էր շախմատի աշխարհի գավաթի 2017 թվականի խաղարկությունը տղամարդկանց շրջանում: Մրցաշարի կիսաեզրափակիչ փուլում հայաստանցի գրոսմայստեր, 34-ամյա Լեւոն Արոնյանը (ՖԻԴԵ-ի վարկանիշով 2-րդն է աշխարհում, մոլորակի չեմպիոն, նորվեգացի Մագնա Կարլսենից հետո, 2802) եւ չին գրոսմայստեր Դին Լիժենը (2777) դասական չորս պարտիաները ավարտեցին ոչ-ոքի: Ապա աշխարհի գավաթակրին հայտնաբերելու նպատակով, համաձայն ընթացակարգի, նշանակվեց 25 րոպեանոց երկու պարտիա՝ յուրաքանչյուր քայլին 10 վայրկյանի ավելացմամբ: Այդ երկու պարտիաներում էլ հաղթանակը տոնեց հայ գրոսմայստերը եւ արդեն երկրորդ անգամ նվաճեց պատվավոր գավաթը: Մինչ այդ, նա շախմատի աշխարհի գավաթի գավաթակիր էր դարձել 2005 թվականին:

Հաղթողին աշխարհի գավաթը հանձնեց Եվրոպական շախմատի ֆեդերացիայի նախագահ, ՖԻԴԵ-ի կողմից այս մրցաշարի կազմկոմիտեի նախագահ, թբիլիսցի գրոսմայստեր Զուրաբ Ազմաիփարաշվիլին (նշենք, որ Զուրաբ Ազմաիփարաշվիլին 2018 թվականին առաջադրվելու է ՖԻԴԵ-ի նախագահի թեկնածու, քանի որ ներկայիս նախագահ ռուսաստանցի Կիրսան Իլյումժինովի թեկնածությունը ՖԻԴԵ-ի անդամների կողմից պաշտպանության չի արժանանում): Լեւոնին ջերմորեն ողջունեցին նաեւ Վրաստանի սպորտի եւ երիտասարդության նախարար Տարիել Խեչիկաշվիլին եւ Վրաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ Գիորգի Գիորգաձեն: Պարգեւատրման արարողությանը հնչեց Հայաստանի պետական օրհներգը:

Մրցաշարի եզրափակիչ հանդիպումներում, ինչպես նաեւ պարգեւատրման արարողությանը ներկա էին թբիլիսահայեր, Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետներ:

Նշենք, որ շախմատի գավաթի խաղարկության ընթացակարգի համաձայն, մրցաշարի եզրափակիչ փուլում հանդես եկող շախմատիստները, տվյալ պարագայում Լեւոն Արոնյանն ու Դին Լիժենը, նվաճել են աշխարհի չեմպիոնի թեկնածուների մրցաշարի ուղեգիրը: Այն կանցկացվի 2018 թվականի մարտին, Բեռլինում: Այդ մրցաշարի հաղթողը կստանա ներկայիս գործող չեմպիոն, նորվեգացի Մագնուս Կարլսենի հետ այդ պատվավոր կոչումը վիճարկելու իրավունքը: Նշենք, որ ներկայիս չեմպիոն Մագնուս Կարլսենը եւս մասնակցում էր թբիլիսյան մրցաշարին, սակայն խաղարկության սկզբնական փուլում «դուրս մղվեց» մրցակիցների կողմից:

Թբիլիսյան մրցաշարում հաղթանակի համար՝ որպես պարգեւադրամ, Լեւոն Արոնյանը ստացավ 120 հազար ԱՄՆ դոլար: Եզրափակիչ փուլի մյուս մասնակից Դին Լիժենը՝ 80 հազար դոլար:

Պարգեւատրման արարողությունից հետո մենք հարցազրույց վարեցինք Լեւոն Արոնյանի հետ:

- Լեւոն, այսօր առավոտյան մենք հանդիպեցինք Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայում, երբ դուրս էիք գալիս այն բակից, որտեղ ծնվել ու ապրել էր Տիգրան Պետրոսյանը...

- Այո', այո', այդ բակ այցելելը վաղուց էի երազում: Դուրս գալով հյուրանոցից՝ եկա այստեղ, որ այս պատասխանատու հանդիպումից առաջ թեկուզ մտովի հաղորդակցվեմ Տիգրան Պետրոսյանի հետ:

- Ուրեմն, յոթ ժամ տեւած մրցամարտի համոզիչ հաղթանակում Ձեզ օգնեց Տիգրան Պետրոսյա՞նը:

- Բնականաբար, ե'ւ Տիգրան Պետրոսյանը, ե'ւ իմ ապագա կինը, որը վերջին ժամանակներս միշտ ինձ հետ է, ե'ւ, իհարկե, իմ թիմի անդամները... Պետք է ասեմ, որ Տիգրան Պետրոսյանի աշխարհի չեմպիոն դառնալուց հետո, շախմատը Հայաստանում դարձավ ամենատարածված մարզաձեւը, եւ այն, որ այսօր հայաստանցի շախմատիստները համարվում են աշխարհում լավագույններից մեկը, եւ այն, որ մեր հավաքականը երեք անգամ դարձել է աշխարհի շախմատի օլիմպիադայի հաղթող, արագ շախմատի աշխարհի չեմպիոն, այն, որ մեր պատանիներն ու աղջիկները մեծ հաջողությամբ հանդես են գալիս միջազգային մրցաշարերում, այս ամենը սկսվեց նրանից, որ Տիգրան Պետրոսյանը 1963 եւ 1969 թվականներին դարձավ աշխարհի չեմպիոն: Եղա նաեւ Թբիլիսիի պիոներպալատում, որտեղ գործում է Տիգրան Պետրոսյանի ու Նինո Գափրինդաշվիլու անվան ակումբը, այն պալատում, որտեղ նրանք կատարել էին իրենց առաջին քայլերը շախմատային օլիմպ տանող ճանապարհին: Ուրախությամբ կարող եմ նշել, որ այսօր շախմատը Հայաստանում ավելի ու ավելի լայն տարածում է ստանում, այն առաջինը աշխարհում ներառված է նաեւ դպրոցական ծրագրում եւ, հավատացեք, որ հայաստանցի շախմատիստները դեռեւս երկար ժամանակ իրենց հիանալի ելույթներով կզարմացնեն շախմատային աշխարհը:

- Լեւոն, պատվավոր գավաթը ստանալիս Դուք Ձեր պատասխան խոսքում ասացիք. «Ես իրավունք չունեի չհաղթել այս մրցաշարում, քանի որ այն անցկացվեց Թբիլիսիում, որտեղ տեղի հայերը միշտ իրենց հիանալի են զգում, ես եկա եւ հաղթեցի»...

- Դա այդպես է, եւ ես էլ Թբիլիսիում ինձ հիանալի էի զգում, բացառիկ ջերմություն ու աջակցություն էի զգում, քանի որ իմ խաղին հետեւում էին համաշխարհային ճանաչման արժանացած այնպիսի վարպետներ, ինչպիսիք են Նոնա Գափրինդաշվիլին եւ Նանա Ալեքսանդրիան, իմ մեծ բարեկամ Զուրաբ Ազմաիփարաշվիլին եւ Գիորգի Գիորգաձեն, շատերը եւ, բնականաբար, թբիլիսահայերը: Առանձնակի հաճելի էր այն, որ մեր լեգենդար ծանրորդ Յուրի Վարդանյանը, ով այսօր Վրաստանում Հայաստանի դեսպանն է, ինձ հրավիրեց դեսպանատուն, հանդիպում ունեցա հայ դիվանագետների հետ:

- Իմիջիայլոց, հանդիսատեսի թվում հանդիպեցինք նոյեմբերյանցիների, ովքեր ասացին, որ Սեդայի ազգականներն են...

- Ճիշտ են ասել, Սեդան մայրս է, արմատներով՝ նոյեմբերյանցի: Ավելացնեմ, որ այստեղից Երեւան մեկնելիս, անցնելու եմ Նոյեմբերյան, մայրս ազգականների մոտ է, ինձ է սպասում, հետո միասին կգնանք Երեւան:

- Իսկ սեպտեմբերի 30-ին, ինչպես հայտնի է, Ձեր հարսանիքն է ֆիլիպինուհի Արինայի հետ:

- Այո, ես շատ ուրախ եմ, որ իմ բարեկամ մի քանի թբիլիսցիներ եւս ընդունեցին իմ հրավերը, եւ հարսանիքին մասնակից 350 հրավիրվածների թվում կլինեն նաեւ նրանք: Իմիջիայլոց, հրավիրված հյուրերի թվում ամենաբազմանդամը «Վրաստանի պատվիրակությունը» կլինի: Հրավերս ընդունել են բոլոր մտերիմներիս՝ Զուրան, Գիորգին, Նանան, Նինոն...

- Լեւոն, «Վրաստան» թերթի ընթերցողների անունից, ի սրտե շնորհավորում ենք Ձեզ Թբիլիսիում տարած նշանակալից հաղթանակի եւ ձեր պսակադրության առիթով: Մաղթում երջանկություն, հաջողություններ ու նորանոր հաղթանակներ: Բարձր տիտղոսներից, որը ցայսօր չեք նվաճել, աշխարհի չեմպիոնի կոչումն է, հավատում ենք, որ 2018թ. այդ կոչումը 49 տարուց հետո, նորից կնվաճի հայ շախմատիստը:

Վ. ԱՐԱՔՍՅԱՆ

Նկարում .- Տարիել Խեչիկաշվիլին եւ Լեւոն Արոնյանը

Լուսանկարը՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՏՈՐԱՇՎԻԼԻ

2017 թվականի հոկտեմբերի 21-ին կկայանան Մունիցիպալիտետի սակրեբուլոյի (ավագանու) և ինքնակառավարվող քաղաքի/համայնքի քաղաքապետի (համայնքապետի) ընտրություններ

Ընտրողները 4 տարի ժամկետով ընտրում են մունիցիպալիտետի սակրեբուլոյի (ավագանու) անդամների և ինքնակառավարվող քաղաքի/համայնքի քաղաքապետի (համայնքապետի):

Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի, ում 18 տարին լրացել է մինչև ընտրությունների օրը կամ լրանում է այդ օրը, բավարարում է Օրենքով սահմանված պայմանները, ունի ընտրություններին մասնակցելու իրավունք:

Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար (ԿԸՀ) չափազանց կարևոր է, որ ընտրություններն անցկացվեն միջազգային չափորոշիչներին համապատասխան, ինչը նկատի ունի բոլոր ընտրողների, այդ թվում՝ Վրաստանի տարածքում հոծ բնակեցված էթնիկ փոքրամասնությունների ընտրողների, իրազեկում և աջակցություն ընտրական գործընթացների մեջ նրանց ներգրավմանը:

Տեղեկատվական/կրթական ծրագրեր՝ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար

2017 թվականին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար կրթական ծրագրերի իրականացմամբ, ընտրական վարչակազմը նպաստել է ընտրական գործընթացների մեջ քաղաքացիների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը, ընտրողների ակտիվության ավելացմանը և իրազեկված ընտրություն կատարելուն:

Մասնավորապես.

Ընտրությունները և երիտասարդ ընտրողը. իրականացվել է 68 մունիցիպալիտետի 93 հանրային դպրոցում և մասնակցել է XI–XII դասարանների 1 645 աշակերտ:
Ընտրական զարգացման դպրոց. իրականացվել է 23 մունիցիպալիտետում և մասնակցել է 18-24 տարեկան 453 երիտասարդ:
Ընտրական վարչարարի դասընթացներ. իրականացվել է բոլոր մունիցիպալիտետներում և մասնակցել է 5 247 անձ:

Ընտրություններին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների մասնակցելու նպատակով ընտրական վարչակազմն ապահովում է.

- Հայերեն և ադրբեջաներեն լեզուներով հատուկ տեսահոլովակի պատրաստում մատչելի ծառայությունների մասին:
- ԿԸՀ-ի հեռախոսային/ տեղեկատվական կենտրոնում ընտրական հարցերի հետ կապված տեղեկատվության ստացում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:
- ԿԸՀ-ի կողմից պատրաստված բոլոր տեղեկատվական տեսահոլովակների հեռարձակում Հանրային հեռարձակողի և տարածաշրջանային հեռուստատեսությունների հեռուստաթերերով հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:
- Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում ապրող հայախոս և ադրբեջանախոս ընտրողները, ընտրողների միասնական ցուցակի որոնողական համակարգից (voters.cec.gov.ge) կարող են օգտվել համակարգչի, պլանշետի, բջջային հեռախոսի, արագ վճարման ապարատի միջոցով:

Հայալեզու և ադրբեջանալեզու ընտրողների համար թարգմանվում են (վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով) և տպագրվում են հետևյալ ընտրական փաստաթղթերը.

- քվեաթերթիկը,
- ընտրողների միասնական ցուցակը (պատին փակցնելու համար հատկացված և սեղանի ցուցակ),
- քվեարկությունն արտացոլող պաստառ,
- ընտրողների հուշաթերթ,
- քվեաթերթիկը լրացնելու կարգը:

Ընտրական հարցերի հետ կապված տեղեկատվություն ստանալու նպատակով կապվե՛ք ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոնի հետ, հետևյալ հեռախոսահամարով. 2 51 00 51:
Ձեզ ծառայություն կտրամադրեն հայախոս և ադրբեջանախոս օպերատորներ:



 # ՄԵՆՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ ՔԵԶ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Սեպտեմբերի 27-ին Հայաստանի նախագահ, Ազգային անվտանգության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը հրավիրեց Ազգային անվտանգության խորհրդի նիստ, որի օրակարգի շրջանակներում քննարկվեցին Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումների եւ հանրային ծառայության համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված գործունեության վերաբերյալ, ինչպես նաեւ Տեղեկատվական անվտանգության ապահովման եւ տեղեկատվական քաղաքականության հայեցակարգի մասին հարցերը:

Առաջին հարցը ԱԱ անդամներին զեկուցեցին փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար Վահէ Գաբրիելյանը եւ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը: Նիստի մասնակիցներին ներկայացվեցին հակակոռուպցիոն ոլորտում մինչ այժմ իրականացված միջոցառումները, այդ թվում՝ Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խմբի գործունեության արդյունքում մշակված օրենքների նախագծերի փաթեթը, կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցության շրջանակներում իրականացված աշխատանքները, ինչպես նաեւ հակակոռուպցիոն նոր ռազմավարության ուղղությունները: Խորհուրդն ի գիտություն է ընդունել ներկայացված զեկույցները:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցեցին Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գեորգի Կուտոյանը եւ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը: Նշվեց, որ հայեցակարգի նախագծում ներկայացված են Հայաստանի տեղեկատվության անվտանգության ապահովման ոլորտում առկա վիճակը, հիմնարար արժեքները, սկզբունքները, շահերը, սպառնալիքները եւ մարտահրավերները, քաղաքականության նպատակները, խնդիրները, ներպետական եւ միջազգային համագործակցության հարցերը եւ այլն: Նշված հարցերի համատեքստում ամփոփված են նաեւ տեղեկատվական միասնական քաղաքականության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները:

Ազգային անվտանգության խորհուրդը, հաշվի առնելով քննարկման արդյունքում հնչած առաջարկությունները, հավանության է արժանացրել հայեցակարգի նախագիծը:

ԸՆԴԳԾՎԵՑ ԱՌԿԱ ՆԵՐՈՒԺԻ ԼԻԱՐԺԵՔ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 27-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Երեւանում գտնվող Միացյալ Թագավորության արտաքին գործերի եւ համագործակցության նախարարության Եվրոպայի եւ Ամերիկաների հարցերով պետնախարար Ալեն Դանքնի հետ:

Հանդիպմանը Հայաստանի նախագահն ընդգծեց, որ Հայաստանը շահագրգռված է Միացյալ Թագավորության հետ միջպետական հարաբերությունները խորացնելու հարցում եւ նշեց, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր, անցած 25 տարիներին, երկու երկրների միջեւ առկա համագործակցության ներուժը դեռեւս լիարժեք չի օգտագործվել: Նա հույս հայտնեց, որ այդ դինամիկան կպահպանվի, եւ հայ-բրիտանական միջպետական հարաբերությունները որակական նոր մակարդակի կբարձրանան:

Իր հերթին, Ալեն Դանքնը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար եւ, Հայաստանի նախագահին փոխանցելով Մեծ Բրիտանիայի ու Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության վարչապետ Թերեզա Մեյի ողջույններն ու բարեմաղթանքները, վստահեցրեց, որ Միացյալ Թագավորությունը եւս մեծ ցանկություն ունի զարգացնելու եւ ամրապնդելու Հայաստանի հետ հարաբերությունները: Ալեն Դանքնը ընդգծեց, որ իր երկիրը պատրաստակամ է օժանդակություն տրամադրել Հայաստանին այն օգտագործել՝ ելնելով երկրի տնտեսության առաջնահերթություններից:

Հանդիպմանն անդրադարձան ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացին, մտքեր փոխանակեցին տարածաշրջանային խնդիրների եւ մարտահրավերների շուրջ:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆՆ ՈՒ ՄԱՆԵ ԹԱՆԴԻԼՅԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ԲԱՔՎԻՑ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորներ Արմեն Աշոտյանն ու Մանե Թանդիլյանը Բաքվում մասնակցեցին «Եվրանեսթ» ԽՎ համաժողովին:

Նշենք, որ համաժողովին իր ելույթում Արմեն Աշոտյանն արդարադարձավ ղարաբաղյան հակամարտության, հայ-ադրբեջանական սրված հարաբերություններին, ներկայացրեց հայկական կողմի դիրքորոշումը:

Բաքվից Հայաստան մեկնելու ճանապարհին, գտնվելով Թբիլիսիում, Արմեն Աշոտյանը հատուկ գրառում կատարեց իր ֆեյսբուքյան էջում:

«Սիրելի հայրենակիցներ, ես եւ Մանեն վերադարձել ենք Բաքվից, հիմա գտնվում ենք Թբիլիսիում: Անչափ շնորհակալ ենք ձեր քաջալերման, սատարման եւ սրտացավության համար: Նորից հավաստիացնում եմ, որ արել ենք ամեն ինչ մեր երկիրը հավուր պատշաճի ներկայացնելու համար: Կրկին շնորհակալ ենք եւ հույսով, որ մի քանի օրից կհանդիպենք Երեւանում»,- գրել է Արմեն Աշոտյանը:

Ազգային ժողովի «Ելք» խմբակցության պատգամավոր Մանե Թանդիլյանը եւս իր կողմից շնորհակալություն հայտնեց հայ ժողովրդին ցուցաբերած աջակցության համար: «Մենք հասանելիության խնդիր ունեինք: Կհանդիպենք Երեւանում եւ մանրամասն կպատմենք մեր այցի մասին, եւ դուք ամբողջական պատկերացում կունենաք, թե այդ օրերին ինչ էր կատարվում Բաքվում»,- ասաց Մ.Թանդիլյանը:

ԿԱՅԱՑԱՎ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Սեպտեմբերի 26-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ու տիկին Ռիտա Սարգսյանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վահէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ներկա են գտնվել «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի «Հայկական ազգային երաժշտական գանձարան» ծրագրի շնորհանդեսին:

Միջոցառման շրջանակներում, ներկայացվել են «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի կողմից վերջին շրջանի հրատարակությունները՝ Մակար Եկմալյանի «Պատարագի» ամբողջացված վերահրատարակությունը՝ լատինատառ տառադարձությամբ (տրանսլիտերացիայով) եւ հայ եկեղեցու երաժշտածիսական կարեւորագույն մատյաններից մեկը՝ «Ժամագիրքը», որն առաջին անգամ է լույս տեսնում եվրոպական նոտագրությամբ եւ տպագրության միջազգային չափանիշներին համապատասխան: Երկու մատյաններն էլ հրատարակվել են երաժշտագիտական նախաբաններով, վերլուծություններով եւ բացատրություններով՝ հայերեն եւ անգլերեն:

«Մշակութային վերածնունդ» հիմնադրամի հիմնադիր-նախագահ Արթուր Ջանիբեկյանը ներկայացրել է «Հայկական ազգային երաժշտական գանձատուփը»՝ շարժական նվագարկիչը, որպես «Հայկական ազգային երաժշտական գանձարան» ծրագրի խորհրդանիշ, որտեղ զետեղված են հիմնադրամի կողմից ձայնագրված եւ թվայնացված 500-ից ավելի ժողովրդական, հոգեւոր եւ աշուղական երաժշտական նմուշներ: Իրականացված հսկայածավալ աշխատանքը, որ եղել է Կոմիտաս Վարդապետի կյանքի երազանքը, նրա ծննդյան օրը՝ սեպտեմբերի 26-ին, որպես նվեր է մատուցվել մեծ Վարդապետի հիշատակին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքից հետո, շնորհանդեսն ավարտվել է, Երեւանի պետական կամերային երգչախմբի կատարումով եւ Հարություն Թոփիկյանի ղեկավարությամբ, «Ժամագրքից» եւ «Պատարագից» հատվածների ներկայացմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱԷՄԳ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Վիեննայում ընթացող Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) Գլխավոր կոնֆերանսի 61-րդ նստաշրջանին, սեպտեմբերի 21-ին, Հայաստանն ընտրվել է ԱԷՄԳ Կառավարիչների խորհրդի անդամ: Ատոմային էներգիայի միջազգային գործակալության Կառավարիչների խորհուրդը, ամենամյա Գլխավոր կոնֆերանսի հետ միասին, ԱԷՄԳ քաղաքական երկու կառույցներից մեկն է: Կառավարիչների խորհրդի անդամ են ԱԷՄԳ 169 անդամ պետություններից ընդամենը 35-ը: Հայաստանը Կառավարիչների խորհրդում պաշտոնավարելու է երկու տարի՝ սկսած 2017 թվականի սեպտեմբերի 25-ից:

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԵՐ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԻՆ

Արդեն 15-րդ տարին է, ինչ լավագույններին խրախուսելու նպատակով, Հայաստանում անցկացվում են «Տարվա լավագույն դաստիարակ» եւ «Տարվա լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթները, որոնց հաղթողները Հայաստանի կառավարության կողմից պարգեւատրվում են ավտոմեքենայով: Հայաստանի կառավարությունը նախատեսում է 2017 թվականի «Լավագույն դաստիարակ» եւ «Լավագույն ուսուցիչ» մրցույթների հաղթողներին պարգեւատրել 5 միլիոն 200 հազար դրամ արժեքով մեկական ավտոմեքենայով: Գործադիրը կառավարության պահուստային ֆոնդից սեպտեմբերի 28-ի նիստում կհատկացնի 10 մլն 400 հազար դրամ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԵԼ Է 5,5 ՏՈԿՈՍՈՎ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2017 թվականի հունվար-օգոստոսին 5,5 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, անկում է գրանցվել միայն շինարարության եւ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ոլորտներում: Սպառողական գների ինդեքսը 2017 թվականի հունվար-օգոստոսին ավելացել է 0,6 տոկոսով, իսկ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը՝ 3,7 տոկոսով:

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Հայաստանում այս տարվա առաջին կիսամյակում գրանցվել է 7 հազար 234 ամուսնություն: 2017թ. հունվար-հունիսին գրանցված ամուսնությունները, 2016թ. հունվար-հունիսի համեմատ, նվազել են 6,5 տոկոսով: 2016 թվականի առաջին կիսամյակում գրանցվել էր 7 հազար 739 ամուսնություն: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում գրանցվել է ամուսնալուծության 1949 դեպք: Այս ցուցանիշը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 11,2 տոկոսով: 2016 թվականի առաջին կիսամյակում գրանցվել է ամուսնալուծության 1753 դեպք: Գրանցված 1000 ամուսնական զույգի համեմատ, 2017թ. հունվար-հունիսին արձանագրվել է ամուսնալուծության 269 դեպք, 2016թ. հունվար-հունիսին արձանագրված 227-ի համեմատ:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(29 սեպտեմբերի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	476,70	479,50
ԵՎՐՈ	557,00	564,00
ՌՈՒԲԼԻ	8,12	8,28

Սեպտեմբերի 22-ի համեմատ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 0,3 դրամով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ



30.09.2017. Սուրբ Գեւորգ քաջամարտիկ զորավարի, Ադոկտոսի եւ Ռոմանոս Երգեցողի հիշատակության օր

Սուրբ Գեւորգը Կապադովկացի բարեպաշտ քրիստոնյա ընտանիքի զավակ է: Զինվորագրվելով հռոմեական բանակին՝ իր ցուցաբերած քաջության եւ հավատարմության շնորհիվ կարճ ժամանակամիջոցում արժանացել է հազարապետության պատվին: Կայսեր հրավիրած խորհրդակցության ժամանակ ընդդիմացել է քրիստոնյաներին հալածելու նրա ծրագրին՝ բացահայտելով իր քրիստոնյա լինելը: Կայսրը, զարմացած ու ապշած տեղի ունեցածից, բանտարկել է սրբին՝ ենթարկելով անլուր չարչարանքների: Սուրբ Գեւորգի քարոզների շնորհիվ, շատերը դարձի են եկել, որոնց թվում էր նաեւ Ալեքսանդրիա թագուհին: Մի կախարդի պատվիրում են, որ երկու բաժակ դեղ պատրաստի սրբին դարձի բերելու համար: Առաջին բաժակը խմելուց հետո, սուրբը պիտի մտքափոխվեր, իսկ երկրորդից հետո՝ մեռներ: Բայց Գեւորգն առ Աստված ունեցած հավատի շնորհիվ, խմում է երկու բաժակն էլ եւ, ի զարմանս բոլորի, կենդանի մնում: Նա հարություն է տալիս նաեւ մի մեռյալի: Կայսեր բազում թախանձանքներից հետո, Գեւորգը վերջապես համաձայնում է կուռքերին զոհ մատուցել: Սակայն, հասնելով կռատու, մեկառմեկ ջարդում է բոլոր կուռքերը՝ ցույց տալով դրանց սուտ եւ սին լինելը: Այս հանդուգն արարքի համար Դիոկղետիանոս կայսրը 303 թվականին գլխատել է տալիս Սուրբ Գեւորգին:

5.10.2017. Սուրբ Սահակ եւ Համազասպ Արծրունի իշխանների հիշատակության օր

7.10.2017. Քրիստոսի 72 աշակերտների հիշատակության օր

ՔԵԹԵՎԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ ՓՈԽԱԴՐՎԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆ

Հնդկաստանից Քեթեւան թագուհու սուրբ մասունքները Վրաստան տեղափոխեցին սեպտեմբերի 23-ին:

Թբիլիսիի միջազգային օդանավակայանում սուրբ մասունքները դիմավորեցին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, հոգեւոր դասի ներկայացուցիչներ եւ հավատացյալներ: Հենց օդանավակայանում էլ Իլիա Երկրորդը անցկացրեց հոգեհանգստյան կարգ, որտեղից սրբությունները Ազգային թանգարան փոխադրվեցին: Հաջորդ առավոտ թագուհու մասունքները տեղափոխվեցին Սուրբ Երրորդության տաճար, եւ հավատացյալներին տեղում աղոթելու հնարավորություն տրվեց: Քեթեւան թագուհու սուրբ մասունքները հանգրվանեցին Վրաստանի բոլոր թեմերում, իսկ սեպտեմբերի 25-ին՝ Քեթեւանոբայի տոնի առիթով, տեղափոխվեցին Կախեթի, Ալավերդու տաճար:

Սուրբ մասունքների տեղափոխման հարցով Հնդկաստանի հետ բանակցությունները տեւել են մի քանի տարի:

Վրաստանի մշակույթի նախարար Միխեիլ Գիորգաձե. «Քրիստոնեությունը Վրաստանի համար ոչ միայն հավատք է, այլեւ մեր ազգային ինքնության որոշիչը, եւ բնական է, որ այս օրը յուրաքանչյուր վրացու համար հուզառատ է: Չորս դարից հետո, Քեթեւան թագուհու սուրբ մասունքները 6 ամսով վերադարձել են հայրենիք: Ես անսահման երջանիկ եմ»:

Պատմական գիտությունների դոկտոր Էլդար Աբուլաշվիլի. «1624 թվականի սեպտեմբերի 12-13-ին տեղի ունեցած Քեթեւան Ծամեբուլու տանջանքների ականատեսն են եղել պորտուգալացի կաթոլիկ-միսիոներները: Առաջին տեղեկությունները նրանց գրառումներում ենք հանդիպում: Հռոմի պապին ուղղված նրանց նամակներում կան տեղեկություններ այս մասին: Նշյալ աղբյուրը վրաց ընթերցողին հայտնի է դարձել 20-րդ դարի 80-ական թվականներին, սակայն դրա հետազոտությունը իրականացրել է արտասահմանյան գործիչ Գյուլբենկյանը: Հրատարակվել է նրա գիրքը Քեթեւան թագուհու մասին, որը թարգմանվել է վրացերեն»:

ՖՈՒԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆ ԱՌԱՋԱԴԻՄԵՑ, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԱՀԱՆՋԵՑ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ֆուտբոլի ազգային հավաքականների վարկանիշային աղյուսակը:

Նոր տարբերակում Վրաստանի ազգային ընտրանին առաջադիմել է 9 հորիզոնականով եւ հանգրվանել 103-րդ տեղում, իսկ Հայաստանի հավաքականը, ընդհակառակը, նահանջել է 11-ով եւ զբաղեցրել 83-րդ հորիզոնականը:

Դասակարգման աղյուսակի նոր առաջատարը աշխարհի գործող չեմպիոն Գերմանիայի ազգային թիմն է: Լավագույն տասնյակում են նաեւ Բրազիլիայի, Պորտուգալիայի, Արգենտինայի, Բելգիայի, Լեհաստանի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Չիլիի եւ Կոլումբիայի թիմերը:

ՈՒԵՖԱ-Ն ՀԱՍՏԱՏԵՑ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՁԵՎԱՉԱՓԸ

Ֆուտբոլի եվրոպական ֆեդերացիան՝ ՈՒԵՖԱ-ն, հաստատել է Ազգերի լիգայի ձեւաչափը: Ազգերի լիգան կմեկնարկի 2018 թվականի սեպտեմբերին, որին կմասնակցեն Եվրոպայից 55 հավաքականներ: Առաջին խաղը կկայանա սեպտեմբերի 6-ին:

Կլինեն A, B, C, D ենթախմբեր: A եւ B խմբերում կլինեն ամենաուժեղ 12 հավաքականները, C ենթախմբում կլինի 15 թիմ, իսկ D խմբում՝ 16 թիմ: A եւ B խմբերում կլինեն 4 ենթախումբ, որոնցում կխաղան 3-ական թիմեր: Խաղերը կլինեն տանը եւ դրսում:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Քաղաք Ռուսաստանում: 4.Ձկան տեսակ: 7.Ոլոռազգի բուսատեսակ: 11.Կիլիկիայի Հռոմկլա քաղաքում 13-րդ դարում ստեղծագործած մանրանկարիչ ... Ռոսլին: 12.«... Աստված, փառքը քեզ» (ժող. երգ): 13.Տեսակետ, գաղափար: 16.Ճիճու, ուտիճ, զեռուն: 17.Ձայնարկություն: 19.Փշապատ կենդանի: 21.Հայ կին ֆիդայի, Աղբյուր Սերոբի կինը: 22.Յոթերորդ նոտան: 23.Տարի, ամյակ: 25.Վրացի երգիչ ... Պավլիաշվիլի: 27.... ու անդաստան: 29.ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը 1997թ.՝ Քոֆի ...: 31.Վառ, մուգ: 32.Նպաստել, օգտակար լինել: 33.Հայաստանի մայրաքաղաքներից: 34.Համո Սահյանի ծննդավայր գյուղը Սիսիանի շրջանում: 36.Ավ.Իսահակյանի գրական հերոս՝ ... ամի: 37.Աղցանի բաղադրամաս: 39.Արվեստի տեսակ: 40.Գեղեցիկ, ջրլող թռչուն: 42.Մալթայի մայրաքաղաքը: 44.Ամբողջի մեկ երկրորդ մասը: 45.Մարմնի մաս: 46.Դեղաբույս: 47.Մի շնչով արտաբերվող հնչյունը կամ հնչյունախումբը: 49.Վրաց երգչուհի ... Բրեգվաձե: 52.ԽՍՀՄ կինոյի հայտնի դերասանուհի ... Ախեջակովա: 53.Հայերենի վերջածանց: 54.Ժխտական նախածանց: 55.Կրակ, բոց: 57.Համաստեղություն: 58.Եվրատեսիլի Հայաստանը ներկայացնող երգչուհի: 61.Ձավակ, տղա երեխա: 62.Տարվա մուտք գործելը:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Վրաց հանրահայտ դերասանուհի ... Անջափարիձե: 2.Վ.Տերյանի «Երկիր ...» ժողովածուն: 3.Ֆրանսիացի կին գրող ... Սանդ: 4.Ուտելի կանաչի: 5.Ձրի ...: 6.Շ.Ռուսթավելու հերոսուհի ... Դարեջան: 8.Արեւմտահայ բանաստեղծ ... Դուրյան: 10.Ամերիկյան ավտոմեքենա: 14.Ամերիկաբնակ երգիչ ... Թունջբոյաջյան: 15.Գետ Հայաստանում: 18.Ռաֆֆու վեպերից: 20.Ձենք-զրահով ապահովել: 21.Թաղամաս Թբիլիսիում: 23.Ղ.Աղայանի հանրածանոթ հեքիաթը: 24.Բանահավաք Գարեգին Սրվանձտյանի գրական ժողովածուն: 25.Հայ բանաստեղծ: 26.Մրգի տեսակ: 28.Որոգայթ, նենգություն: 30.Վրաստանում քրիստոնեություն տարածած կույս: 35.Ժամանակի միավոր: 36.Երաժշտական ինտերվալ: 38.Վրաց հայտնի դերասանուհի ... Վաչնաձե: 41.Հայոց Արշակունի թագավոր: 42.Գետ Ռուսաստանում: 43.Թողնել-հեռանալ: 48.Ա.Վշտունու երգի վերածված բանաստեղծություններից: 49.Վրաց նկարիչ ... Փիրոսմանի: 50.Գետ Վրաստանում: 51.Թնդյուն, դղրդյուն: 55.Անեփ, չեփված: 56.Արեւելյան մարզաձեւ: 57.Քաղաքի ...ն աղտոտված է ծխից ու փոշուց: 58.Ցուցական դերանուն: 59.Անշունչ առարկա: 60.Մեսրոպյան այբուբենի տառ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Սպասելիք: 7.Պղինձ: 8.Համազարկ: 11.Իսահակ: 15.Տատ: 17.Գենետիկա: 19.Ձինակիր: 21.Կակա: 22.Ադամո: 25.Ռումիներեն: 27.Ռանդա: 28.Պանասոնիկ: 33.Բլբլան: 34.Վանեսա: 35.Նիշ: 36.Տուժա: 37.Հողված: 40.Կաֆե: 41.Նարկոզ: 42.Թամարա: 45.Լեզու: 46.Աբաս: 47.Քանդակ: 48.Մոցարտ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Պլաստիկ: 3.Սպարտակ: 4.Իբր: 5.Աղքատ: 6.Գնդակ: 9.Այգի: 10.Կին: 12.Սեղան: 13.Հիմար: 14.Կանոն: 16.Անասնաբուժարան: 18.Երամ: 20.Կառապան: 23.Դելոն: 24.Մետիս: 26.Իրավ: 27.Ռոբ: 29.Անիրազեկ: 30.Սարո: 31.Ներվ: 32.Կայծ: 36.Տանիք: 37.Հեթում: 38.Դիմաց: 39.Ագրար: 40.Կոլա: 43.Աբա: 44.Աստ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445